

Վիկտորիաների ստեղծում և հետադարձ կապ

Kahoot!

Kahoot <https://getkahoot.com>

Kahoot-ը անվճար հարթակ է, օնլայն վիկտորիաների, խաղերի, թեստերի և հարցումների ստեղծման համար: Kahoot-ի միջոցով կարելի է դասը վարել խաղային ֆորմատով: Այն հարմար է ցանկացած ուսումնական առարկայի և տարիքի համար:



Quizizz <https://quizizz.com>

Ֆունկցիոնալ առումով Quizizz-ը հիշեցնում է Kahoot-ին: Այն ևս նախատեսված է տարատեսակ խաղեր, վիկտորիաներ և թեստեր ստեղծելու համար: Ի տարբերություն Kahoot-ի այստեղ յուրաքանչյուր աշակերտ հարցերին պատասխանում է իր ժամանակի մեջ և կախված չէ մյուս աշակերտների պատասխանի արագությունից: Quizizz-ում հնարավոր է ընդհանրապես հանել ժամանակի պարամետրը և աշակերտը հնարավորություն ունի հարցերին պատասխանել առանց ժամանակային սահմանափակման:



Triventy <https://triventy.cet.ac.il>

Triventy-ին ևս անվճար հարթակ է նախատեսված վիկտորիաների, խաղերի կամ թեստերի ստեղծման համար: Ուսուցիչը կարող է խաղը ստեղծել իր համակարգչով, իսկ աշակերտները հարցերին պատասխանեն իրենց հեռախոսներից կամ համակարգիչներից: Մա ևս ֆունկցիոնալ առումով նման է Kahoot-ին և Quizizz-ին, ի տարբերություն նրանով որ Triventy-ի դեպքում ուսուցիչը կարող է աշակերտին տալ խմբագրելու հնարավորություն:



Flippity <https://www.flippity.net>

Եվս մեկ հետաքրքիր և անվճար հարթակ ուսուցիչների համար, որի միջոցով կարելի է ստեղծել տարբեր ինտերակտիվ վարժություններ սովորողների համար: Այստեղ աշխատելու համար հատուկ գրանցվել պետք չէ: Ֆունկցիոնալ առումով նման է LearningApps, Quizlet, Jeopardy հարթակներին:



Plickers <https://get.plickers.com>

Եթե օրինակ դպրոցում չկա անհատական համակարգիչների, սմարթֆոնների կամ WiFi-ի հնարավորություն, բայց ցանկություն կա դասապրոցեսին կիրառել ինտերակտիվ խաղեր կամ վիկտորինաներ, ապա այդ դեպքում կարող եք օգտվել Plickers հարթակից: Այս դեպքում բավական է, որ միայն համակարգիչ և ինտերնետային կապ ունենա ուսուցիչը: Հատուկ քարտերի միջոցով աշակերտները պատասխանում են, ուսուցիչը սմարթֆոնով հաշվում է պատասխանները, իսկ համակարգը ավտոմատ որոշում է ով է ճիշտ պատասխանել, ով սխալ:



Mentimeter

Mentimeter <https://www.mentimeter.com>

Mentimeter-ը մի հարթակ է, որտեղ դուք կարող եք ստեղծել ինտերակտիվ պրեզենտացիաներ: Այսինքն կարող եք հաջորդաբար թերթել ինչպես ցուցադրման համար նախատեսված այնպես էլ փոխհամագործակցության համար նախատեսված սլայդերը՝ միաժամանակ անցկացնելով հարցում, քվեարկություն և այլն:

slido

Sli.do <https://www.slido.com/>

Slido-ն հարթակ է նախատեսված «հարց ու պատասխան» անցկացնելու համար, անմիջապես դասապրոցեսի ժամանակ: Լսարանը (աշակերտ, ուսանող և այլն) կարող է իր սմարթֆոնների կամ համակարգչի միջոցով թողնեն հաղորդագրություններ, պատասխանեն հարցերի կամ տալ հարցեր, ինչպես նաև քվեարկել: Հետադարձ կապը մասնակիցների հետ տեղի է ունենում անմիջապես: